

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԻԶՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՆՎԻՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՄԲՈՆԻ
ՍՏԵՂԾՄԱՆ 5-ԱՄՅԱԿԻՆ

(Մայիսի 4, 2015 թ.)

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ
ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագիր և թեզիսներ



ԵՐԵՎԱՆ - 2015

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՊՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

Զեկուցումը ներկայացնում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկերենի դասավանդման մի շարք առանձնահատկություններ:

Ֆակուլտետի յուրաքանչյուր կուրսում դասավանդվում է միջազգային հարաբերություններին և դիվանագիտությանը վերաբերող առանձին բնագավառ՝ իր ուրույն բառապաշարով, դիվանագիտական գրագրության յուրահատկություններով և այլն: Դասավանդման ընթացքում ուսանողը, փաստորեն, գիտելիք է ստանում ոչ միայն անգլերենի, այլ նաև դիվանագիտության և միջազգային հարաբերությունների բնագավառների վերաբերյալ:

Ֆակուլտետում անգլերենի դասավանդումը տարբերվում է նաև նրանով, որ ուսանողներն անընդհատ հետևում են միջազգային մամուլին, գրեթե յուրաքանչյուր դասաժամին քննարկում, մեկնաբանում և վերլուծում ԶԼՄ-ներից* քաղված նյութեր:

Ուսանողներին անգլերեն ուսուցանելու գործում շատ է օգնում նոր տեխնոլոգիաների (համակարգիչ, պլանշետ, պրոեկտոր և այլն) կիրառումը, որոնք էլ ավելի հետաքրքիր ու արդյունավետ են դարձնում դասերը:

Անգլերենի դասավանդման ժամանակ շատ կարևոր է մասնագիտական եզրույթների հայերեն ճշգրիտ թարգմանությունը, և քանի որ դրանց թիվն օրըստօրե ավելանում է, հաճախ դրանք թարգմանելիս որոշակի դժվարությունների ենք հանդիպում, և երկար ժամանակ է պահանջվում նոր բառի «քաղաքացիություն» ստանալու համար: Մեր և ուսանողի խնդիրներից է նաև երբեմն ինքնուրույն թարգմանել որոշ եզրույթներ և հաջողված տարբերակների կիրառություն առաջարկել:

Զեկուցումն առավել հանգամանորեն է անդրադառնում դիվանագիտական եզրույթների թարգմանության բարդություններին ու նրբություններին, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ

համացանցի հատուկ կայքերի դասախոսությունները լսարանում լսելու և քննարկելու մեր փորձին, կիսամյակների ավարտին ներկայացվող զեկուցումների գիտական մակարդակը բարձրացնելուն ուղղված մեր ջանքերին և դրանց արդյունքներին: